ՊՐԱՔՍՅԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասպիրանտ

ՀԱԿԱՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության կարգավորման պետական լծակներից մեկն է: Տարբեր ժամանակաշրջաններում, կախված համաշխարհային և ներքին տնտեսության իրադրությունից, տարբեր երկրների կառավարություններ փորձում են լուծել իրենց առջև ծառացած հիմնախնդիրները՝ կիրառելով դիսկրետ ցիոն և ոչ դիսկրետցիոն հարկաբյուջետային քաղաքականությունների գործիքակազմեր: Չնայած վերջին երկու տասնամյակների ընթացքում հակապարբերաշրջանային կարգավորման հարցում նախապատվությունը տրվում էր դրամավարկային քաղաքականությանը, 2007–2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ստիպեց համաշխարհային տնտեսագիտական հանրությանը վերանայել հարկաբյուջետային քաղաքականության կիրառման հորիզոնները:

Հիմնաբառեր. *հակապարբերաշրջանային կարգավորում, հարկաբյուջետային քաղաքականություն, 2007–2009 թթ. ֆինանսական ճգնաժամ, պետական բյուջե, պարբերաշրջանային և կառուցվածքային հաշվեկշիռ, Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտր, ներուժային ՀՆԱ*

JEL: E63, G01, G18, O23

Հարկաբյուջետային քաղաքականության կիրառումը, որպես հակապարբերաշրջանային կարգավորման գործիք, միշտ էլ եղել է քննարկումների առարկա: Այս հարցի շուրջ տնտեսագետների կարծիքները տարբեր են: Ոմանք կարծում են, թե հարկերը, տրանսֆերտները և պետական ծախսերը կարելի է արդյունավետորեն կիրառել տնտեսական գործունեության տատանումներին հակազդելու նպատակով, իսկ մյուսները պնդում են, որ հար-

կաբյուջետային քաղաքականության գործողությունները մեծ մասամբ անարդյունավետ են և կարող են հակառակ ազդեցություն ունենալ՝ կապված հարկաբյուջետային քաղաքականության կիրառման ժամանակային առանձնահատկությունների հետ: Երկրորդ տեսակետը գերիշխում էր վերջին երկու տասնամյակների ընթացքում և, որպես հետևանք՝ հակապարբերաշրջանային քաղաքականության հարցում հարկաբյուջետային միջոցառումներն իրենց տեղը զիջեցին դրամավարկայինին:

2000-ականների սկզբից ամբողջական պահանջարկի կարգավորման հարցում տնտեսագիտական հանրության և կառավարող մարմինների կողմից նախընտրությունը հիմնականում տրվում էր դրամավարկային քաղաքականությանը: Հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ դրամավարկային քաղաքականության նախապատվության մի շարք պատճառներ գոյություն ունեն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

- *Ժամանակային առանձնահատկությունները:* Օրենսդրական մարմիններն ինստիտուտներ են, որոնք խոչընդոտների են հանդիպում արագ որոշումներ կայացնելիս: Ի հակադրություն դրան, կենտրոնական բանկերը կարող են փոփոխել ակտիվների գները մեկ ժամում: Բանն այն է, որ այս տարի ազդեցություն ունեցող հարկաբյուջետային քաղաքականությունն անցած տարի օրենսդրական մարմինների կողմից ընդունված որոշման արդյունք է, որը կայացվել է երկու կամ երեք տարի առաջ առկա տեղեկատվության հիման վրա: Այսպիսի պայմաններում ցածր է հավանականությունը, որ դա կհանգեցնի օպտիմալ տնտեսական արդյունքների:
- *Քաղաքականության իրականացման խնդիրներ:* Հնարավոր չէ կտրուկ ավելացնել կամ կրճատել պետական ծախսերն առանց տնտեսական կայունության վրա էական ազդեցությունների: Որքան արագ է իրականացվում հարկաբյուջետային քաղաքականության միջամտությունը, այնքան քիչ է հավանականությունը, որ այդ միջամտությունը լավ մշակված, ստուգված և փորձված է ժամանակով: Բացի այդ, հարկաբյուջետային քաղաքականության իրականացման հնարավորությունն էականորեն կախված է երկրում տիրող տնտեսական իրավիճակից: Օրինակ՝ մեծ բյուջետային պակասուրդ ունեցող երկրներում հարկաբյուջետային քաղաքականությունն ավելի դժվար է արձագանքում անկումների փուլում, քան այն երկրներում, որոնք այդ առումով ավելի բարենպաստ իրավիճակում են կամ անգամ ունեն բյուջեի ավելցուկ[1]: Իրականացվող միջոցառումներն էլ, իրենց հերթին, ավելի ուժեղ ազդեցություն են ունենում այն երկրներում, որտեղ պետական պարտքի ցուցանիշներն ավելի ցածր են[2]: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ հարկաբյուջետային անվտանգության ավելի մեծ սահմաններ են անհրաժեշտ: Որոշակի հարկաբյուջետային կանոններ, ինչպիսիք են, օրինակ՝ պետական բյուջեի պակասուրդի առավելագույն չափի սահմանումը կամ պետական ծախսերի ավելացման սահմանափակումները, կարող են կիրառվել այդօրինակ անվտանգության սահմանների ստեղծման համար:
- *Քաղաքական ռենտայի իրացման խնդիրները:* Կառավարությունները միտված են իրացնելու ժողովրդական զանգվածների շահերը, սակայն շատ

---

[1] Տե՛ս **Égert B.,** Fiscal Policy Reaction to the Cycle in the OECD: Pro- or Counter-cyclical?, OECD Economics Department Working Papers, No. 763, 2010:

[2] Տե՛ս **Röhn O.,** New Evidence on the Private Saving Offset and Ricardian Equivalence, OECD Economics Department Working Papers, No. 762, 2010:

հաճախ կառավարող մարմիններն իրենց ընձեռված իշխանությունը կարող են օգտագործել հօգուտ սեփական շահերի: Նրանք հետամուտ են լինում, այսպես կոչված, «քաղաքական ռենտայի» իրացմանը և կարող են կայացնել քաղաքական որոշումներ, որոնք նպատակահարմար չեն երկրում տիրող տնտեսական իրավիճակի պայմաններում: Օրինակ՝ շատ հաճախ իշխող բյուրոկրատները սկսում են ակտիվ գործունեություն ծավալել քաղաքական ընտրությունների նախաշեմին՝ սեփական վարկանիշի բարձրացման նպատակով՝ հաշվի չառնելով, որ այդ գործողությունները կարող են հանգեցնել անցանկալի տնտեսական հետևանքների:

- *Ավելորդության խնդիրը:* Մինչև 2007–2009 թթ. ճգնաժամը, տարբեր երկրների պետական կառավարման մարմինների և տնտեսագետների շրջանում ձևավորվել էր այն թյուր կարծիքը, թե դրամավարկային քաղաքականությունը բավարար էր հակապարբերաշրջանային կարգավորման խնդիրների լուծման համար. հարկաբյուջետային քաղաքականության միջամտությունը պարզապես անհրաժեշտ չէր:

Թերևս, վերոնշված պատճառներից ամենակարևորը վերջինն է: Մյուս քաղաքական և ինստիտուցիոնալ պատճառաբանությունները վերաբերում են այն բանին, թե ինչու դիսկրեցիոն հարկաբյուջետային քաղաքականությունը չարժե կիրառել որպես հակապարբերաշրջանային կայունացնող քաղաքականության մի մաս՝ հիմնված դասական սկզբունքների վրա: Սակայն այս փաստարկումները հիմնավոր չէին թվա, եթե չլիներ ցանկացած պահի նախընտրելի ուղղությամբ տնտեսությունում անվանական ծախսեր կատարելու կենտրոնական բանկերի կարողությունը: Այս պայմաններում, կարծես, «տարածք» չէր թողնվել հարկաբյուջետային քաղաքականության համար:

Սակայն 2007–2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, դրան հաջորդող մեծ անկումը զարգացած և դրա տարածումը զարգացող երկրներում կրկին հետաքրքրություն առաջացրին քաղաքական գործիչների և հետազոտողների շրջանակներում հարկաբյուջետային քաղաքականության՝ որպես հակապարբերաշրջանային կիրառելի գործիքի նկատմամբ:

Տնտեսական կարգավորման նպատակով հարկաբյուջետային քաղաքականությունը կիրառվում է երկու գործիքակազմով: Առաջինը ոչ ճկուն կամ ոչ հայեցողական հարկաբյուջետային քաղաքականությունն է, որը գրականության մեջ կոչվում է նաև ավտոմատ կայունարարների քաղաքականություն: Այս քաղաքականությունը հիմնականում իրականացվում է որոշակի ժամանակահատվածում չփոփոխվող, ինքնակարգավորվող լծակների միջոցով, ինչպիսիք են հարկային դրույքաչափերը, գործազրկության նպաստները և այլն: Ավտոմատ կայունարարների ազդեցության ուժը կախված է հարկային համակարգի տեսակից, կիրառվող հարկադրույքների և նպաստների չափից և այլն: Իրենց բնույթով ավտոմատ կայունարարներն անմիջական դեր են խաղում տնտեսական տատանումների ընթացքում:

Սակայն առավել հաճախ ճկուն կամ հայեցողական քաղաքականությունն է առաջադրվում որպես հակապարբերաշրջանային կարգավորման միջոց: Դա ներառում է կառավարման մարմինների գործողություններ, որոնք ազդում են պետական ծախսերի, հարկային մուտքերի և տրանսֆերների վրա և հաճախ նախաձեռնվում են տնտեսության կայունացումից զատ այլ նպատակներով (սոցիալական, մշակության, երկրի պաշտպանության և այլն): Այնուամենայնիվ, արդյունավետ ճկուն հարկաբյուջետային քաղաքականության իրականացման հնարավորությունը վիճարկվում է շատ տնտե-

սագետների կողմից: Հիմնականում այս թերահավատությունը փաստարկվում է այն դրույթով, որ գործադիր իշխանությունները չեն կարող փոփոխվող տնտեսական իրականությանը համընթաց նույնքան արագ իրականացնել այդ քաղաքականությունը: Բացի դա, եթե անգամ ինչ-որ եղանակով հնարավոր լինի լուծել հարկաբյուջետային քաղաքականության ժամանակատարության խնդիրը, դրա արդյունավետությունը փոփոխական է՝ կախված տնտեսության բացության, կապիտալի շարժունակության աստիճանից, արտարժույթի կարգավորման ռեժիմից և այլ գործոններից, որոնց արդյունքում հարկաբյուջետային ազդակները կարող են արտահոսել երկրից:

Որոշ նորդասականներ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության ավանդական հակափաստարկներից զատ նշում են նաև սպառողների սպասումները՝ հիմնավորելով, որ տնային տնտեսությունները որոշակի սպասումներ ունեն եկամուտների և հարկերի վերաբերյալ, և որ հարկային բազմարկիչը, այս համատեքստում, կարող է լինել շատ փոքր կամ գուցե նույնիսկ բացասական, եթե աճող պետական ծախսերը արտամղման էֆեկտով կրճատեն մասնավոր սպառման և ներդրումների ծավալները[3]:

Ի հակադրություն վերոնշյալ դրույթների, որոշ նորքեյնսյան մոդելներում[4] նշվում է, որ պետական ծախսերի աճը կարող է դրական ազդեցություն ունենալ սպառման և իրական աշխատավարձերի վրա, և, որ ոչ բոլոր ժամանակավոր հարկաբյուջետային միջոցառումներն են անարդյունավետ: Այնպիսի միջոցառումներ, ինչպիսին է, օրինակ՝ սպառման հարկերի փոփոխությունը, հավանական է՝ լինեն արդյունավետ, եթե հասարակությունը գիտակցի, որ դրանք ժամանակավոր, այլ ոչ թե մշտական բնույթ ունեն:

Գլոբալացման և տնտեսական ինտեգրման ժամանակակից պայմաններում սխալ կլինի հարկաբյուջետային քաղաքականության՝ որպես հակապարբերաշրջանային կայունացնող գործիքի կիրառման հնարավորությունները դիտարկել՝ հաշվի առնելով միայն դրա ազդեցությունը ներքին տնտեսության վրա: Տարբեր երկրների միջև տնտեսական հարաբերությունների ինտենսիվացումը հանգեցնում է հարկաբյուջետային քաղաքականության արդյունքների՝ մի երկրից մյուսը փոխանցման: Այս առումով, հարկ ենք համարում նշել այն հիմնական խողովակները, որոնց միջոցով կատարվում է այդ փոխանցումը.

- *Թողարկման խողովակ:* Հարկաբյուջետային քաղաքականությունը, հայրենական արտադրության մեջ նշանակալի դեր ունենալով, ազդում է նաև ներմուծման նկատմամբ պահանջարկի վրա, ինչն էական գործոն է ինտեգրված տարածքներում: Սա իր ազդեցությունն է թողնելու ինտեգրման խմբի ներսում երկրների զուտ արտահանման ցուցանիշների վրա:
- *Գնային խողովակ:* Հարկաբյուջետային քաղաքականությունը, ազդելով երկրի ներսում ինֆլյացիայի տեմպի վրա, գործընկեր երկրներում դրա փոփոխության պատճառ կարող է լինել: Հարկաբյուջետային քաղաքականությունը ազդեցություն է ունենում սղաճի տեմպի վրա, այսպես կոչված, փոխանցման էֆեկտի միջոցով:

---

[3] Տե՛ս **Barro R. J.,** Are Government Bonds Net Wealth, Journal of Political Economy 81, 1974, էջ 1095–1117:

[4] Տե՛ս **Jordi G. and Perotti R.,** Fiscal Policy and Monetary Integration in Europe, Economic Policy, Vol. 37 (October), 2003, էջ 533–572:

- *Տոկոսադրույքի և արտարժութային խողովակ:* Հարկաբյուջետային քաղաքականությունը կարճաժամկետում կարող է ազդեցություն ունենալ տոկոսի և արտարժույթի դրույքաչափի վրա՝ հրահրելով տոկոսի և արտարժույթի դրույքաչափի փոփոխություն գործընկեր երկրներում:
- *Պետական պարտքի խողովակ:* Որոշ ինտեգրման տարածքներում, ինչպիսին է, օրինակ՝ Եվրոմիությունը, պետական պարտքն ազդեցություն է ունենում երկարաժամկետ տոկոսադրույքի նորմայի վրա: Բացասական հետևանքների տարածումը տեղի կունենա, եթե ֆինանսական շուկաներում պատշաճ կերպով չգնահատվեն առանձին երկրների պետական պարտքից բխող ռիսկերը:
- *Կառուցվածքային բարեփոխումների խողովակ:* Կառուցվածքային բարեփոխումները միջանկյալ և վերջնական սպառման ապրանքների շուկաներում պետք է ուժեղացնեն մրցակցությունը՝ հանգեցնելով արտադրողականության աճի: Առանձին երկրների կողմից ամբողջական առաջարկի աճին միտված միջոցառումների կիրառումն ավելացնում է ներմուծման ծավալները՝ դրական ազդեցություն ունենալով այլ երկրներում հանրային ֆինանսների ցուցանիշների վրա:

Ինչպես արդեն նշվել է, 2007–2009 թթ. ճգնաժամը ստիպեց վերանայել հարկաբյուջետային քաղաքականության կիրառման հորիզոնները: Ճգնաժամի հետևանքները մեղմելու և ավելի խոր անկումից խուսափելու համար մի շարք երկրներ իրականացրին հարկաբյուջետային միջոցառումներ՝ երկրի խոշորագույն հիփոթեքային գործակալությունների, ֆինանսական ինստիտուտների և բանկերի մասնակի կամ ամբողջական ազգայնացում, գործազրկության և առողջապահության գծով ապահովագրական համակարգի բարելավում, բնակչության լայն շերտերին հարկային արտոնությունների տրամադրում, հարկային վարչարարության օպտիմալացում, տնտեսական աճ ապահովող ոլորտներում ներդրումներ և այլն:

ՀՀ կառավարության կողմից ևս իրականացվեցին հարկային և մաքսային մի շարք բարեփոխումներ, որոնց հիմնական նպատակը մակրոտնտեսական կայունության ապահովումը և տնտեսական աճի լրացուցիչ խթանների բացահայտումն ու ներդրումն էին: Իրականացված բարեփոխումների շարքում ընդգրկված միջոցառումները վերաբերում էին գործարար աշխարհի, մասնավորապես՝ ՓՄՁ-ի համար հարկային վարչարարության պարզեցմանը, պետական տուրքերի կրճատմանը, ԱԱՀ-ի գծով հարկման շեմի բարձրացմանը, մաքսային ընթացակարգերի պարզեցմանը և այլն[5]:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը և դրա հետևանքների մեղմմանն ու հաղթահարմանն ուղղված գործողությունները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների վրա: 2009 թ. Հայաստանում պետական բյուջեի եկամուտները կտրուկ կրճատվեցին՝ 2008 թ. 785,3 մլրդ դրամի փոխարեն կազմելով 690 մլրդ դրամ: Ի հակադրություն դրա, ծախսերն ավելացվեցին՝ 810.5 մլրդ դրամից հասնելով 929,1 մլրդ դրամի՝ երկրում տնտեսական ակտիվության օժանդակության և խոցելի խավերի պաշտպանության նպատակով: Այս ամենի հետևանքով բյուջեի պակասուրդը 2008–2009 թթ. ընթացքում ՀՆԱ-ի նկատմամբ աճեց 6 տոկոսային

[5] Տե՛ս Ամփոփ հաշվետվություն ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին, Եր., 2009. http://www.gov.am/files/library/74.pdf

կետով, իսկ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն ավելի քան կրկնապատկվեց[6]:

Այս իրավիճակում անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է հարկային քաղաքականությունն արձագանքել ճգնաժամին. սկզբնական հաշվեկշռի փոփոխության ո՞ր մասն է պայմանավորված եղել ավտոմատ կայունարարների ազդեցությամբ, իսկ ո՞ր մասը՝ հայեցողական քաղաքականությամբ:

Հենվելով միայն պետական բյուջեի տատանումների վրա՝ հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ: Խնդիրն ավելի ակնառու է դառնում, երբ, օրինակ, տնտեսական աճի փուլում բյուջեի պակասուրդի կրճատումը քողարկում է հանրային ֆինանսների վատթարացումը կամ հակառակը՝ տնտեսական անկման փուլում տեղի է ունենում պետական ծախսերի չնախատեսված աճ: Այդ իսկ պատճառով գործնականում քաղաքականության առավել համապարփակ պատկեր ստանալու համար ընդունված է պետական բյուջեն ճշգրտել պարբերաշրջանի ազդեցությամբ: Այս նպատակով տնտեսագիտական գրականության մեջ պետական բյուջեի ընդհանուր հաշվեկշիռը ընդունված է ներկայացնել պարբերաշրջանով ճշգրտված և պարբերաշրջանային հաշվեկշիռների հանրագումարի տեսքով[7].

$$OB = CB + CAB,$$

որտեղ՝ OB-ն պետական բյուջեի ընդհանուր հաշվեկշիռն է,
CB-ն՝ պարբերաշրջանային հաշվեկշիռը,
CAB-ն՝ պարբերաշրջանից ճշգրտված կամ կառուցվածքային հաշվեկշիռը, որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$CAB = R\left(\frac{Y^*}{Y}\right)\varepsilon_{R,Y} - G\left(\frac{Y^*}{Y}\right)\varepsilon_{G,Y},$$

որտեղ՝ Y^*-ը ներուժային ՀՆԱ մակարդակն է,
R-ը և G-ն, համապատասխանաբար՝ պետական բյուջեի եկամուտներն ու ծախսերը, իսկ $\varepsilon_{R,Y}$ -ը և $\varepsilon_{G,Y}$–ը՝ դրանց էլաստիկությունը ՀՆԱ ճեղքվածքի նկատմամբ:

Կատարել ենք 2000–2016 թթ. ՀՀ կառավարության իրականացրած հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն: Այդ նպատակով ՀՆԱ ներուժային մակարդակը գնահատվել է Հոդրիկ-Պրեսկոտի ֆիլտրի միջոցով: Ըստ մեր գնահատումների՝ ՀՆԱ իրական և ներուժային մակարդակների միջև ամենամեծ տարբերությունը եղել է 2008 թ., երբ ՀՆԱ ճեղքվածքի ցուցանիշը կազմել է 15,99 միավոր: ՀՆԱ իրական և ներուժային մակարդակների շարժընթացը 2000–2016 թթ. արտացոլված է գծապատկերում[8].

---

[6] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Եր., 2010, էջ 372–414:

[7] Տե՛ս **Price R. W.R., Dang T.T.** and **Botev J.,** Adjusting fiscal balances for the business cycle: new tax and expenditure elasticity estimates for OECD countries, OECD, Economics Department, Working Papers No. 1275 10-Dec-2015:
Mourre G., Astarita C. and **Princen S.**, Adjusting the budget balance for the business cycle: the EU methodology, European Commission Directorate-General for Economic and Financial Affairs, European Union, 2014:
Bornhorst F. and **Dobrescu G.**, When and How to Adjust Beyond the Business Cycle? A Guide to Structural Fiscal Balances, Fiscal Affairs Department of IMF, Washington, 2011:

[8] Հաշվարկները կատարվել են ԱՄՀ վիճակագրական բազայի տվյալների հիման վրա՝ http://www.imf.org/external/pubs/ft/weo/2017/01/weodata/index.aspx



Գծապատկեր 1. *2000–2016 թթ. Հայաստանի իրական և ներուժային ՀՆԱ (մլրդ դրամ)*

Պետական բյուջեի կառուցվածքային հաշվեկշռի որոշման համար ՀՆԱ ճեղքվածքի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի էլաստիկության գործակիցները գնահատվել են համապատասխանաբար՝ 1 և 0[9]:



Գծապատկեր 2. *2000–2016 թթ. Հայաստանի պետական բյուջեի ընդհանուր, կառուցվածքային և պարբերաշրջանային հաշվեկշիռների շարժընթացը*

Պետական բյուջեի ընդհանուր հաշվեկշռի բաղադրիչների շարժընթացի (գծապատկեր 2[10]) վերլուծությունից եկել ենք այն եզրակացության, որ պետական բյուջեի պակասուրդը հիմնականում պայմանավորված է կառուցվածքային հաշվեկշռի մեծությամբ: Եվ քանի որ կառուցվածքային հաշվեկշիռն արտացոլում է կառավարության կողմից իրականացվող հայեցողական կամ ճկուն հարկաբյուջետային քաղաքականությունը, ապա կարելի է պնդել, որ 2000–2016 թթ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում եղել է հայեցողական:

---

[9] Գնահատումը կատարվել է ըստ համապատասխան մեթոդաբանության՝ **Girouard N.** and **Christophe A.,** Measuring Cyclically-adjusted Budget Balances for OECD Countries, OECD Economics Department Working Papers, No. 434, OECD Publishing, 2005:

[10] Հաշվարկները կատարվել են ՀՀ ԱՎԾ տվյալների բազայի հիման վրա:

Իր հերթին, պարբերաշրջանային հաշվեկշռի դինամիկան արտացոլում է իրականացվող ոչ հայեցողական հարկաբյուջետային քաղաքականությունը: Ուստի պարբերաշրջանային հաշվեկշռի ցածր աստիճանի մասնակցությունն ընդհանուր հաշվեկշռի կազմավորման մեջ փաստում է ավտոմատ կայունարարների համակարգի թույլության մասին, ինչը բացատրվում է այնպիսի ինստիտուցիոնալ գործոններով, ինչպիսին են ստվերային տնտեսության չափերը, հարկային համակարգի վարչարարության անկատարությունները և այլն:

Հարկաբյուջետային ազդակների շարժընթացի վերլուծության արդյունքում եկել ենք հետևյալ եզրակացության. ինչպես մի շարք այլ զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում[11], այնպես էլ ՀՀ-ում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում պարբերաշրջանամետ է: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի նախընթաց տարիներին, մասնավորապես՝ 2004–2007 թթ. խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը նպաստել է տնտեսության գերտաքացմանը, ինչի հետևանքով ՀՆԱ անկման ցուցանիշը մեր երկրում եղել է աշխարհում ամենաբարձրերից մեկը՝ 2009 թ. կազմելով -14%: Այնուամենայնիվ, 2013–2016 թթ. ընթացքում, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ տնտեսությունը ենթարկվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի երկրորդային հետևանքների, և, Ռուսաստանի գործարար ակտիվության կրճատմամբ պայմանավորված, արտաքին ցնցումների, հարկաբյուջետային ազդակներն ունեցել են խթանող բնույթ, որի արդյունքում իրական և ներուժային ՀՆԱ-ների միջև ճեղքվածքը չի գերազանցել -0.78 միավորը: 2017 թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 1108.4 մլրդ դրամ, ինչը բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 5.9%-ով: Եկամուտների այս աճը հիմնականում ապահովվել է հարկերի և տուրքերի գծով 6.9% աճի շնորհիվ: Նույն ժամանակահատվածում պետական ծախսերը կրճատվել են 0.2%-ով՝ կազմելով ընդամենը 1249.6 մլրդ դրամ:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարծում ենք՝ ՀՀ կառավարության կողմից պետք է ծրագրեր մշակվեն ավտոմատ կայունարարների գործիքակազմի առավել արդյունավետ իրացման համար: Մասնավորապես՝ հարկ է քայլեր ձեռնարկել դեպի հարկային դաշտ ստվերային տնտեսության ներգրավման և հարկային վարչարարության արդյունավետության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Անհրաժեշտ է պարբերաշրջանամետ հարկաբյուջետային քաղաքականությունից աստիճանական անցում կատարել դեպի հակապարբերաշրջանամետ քաղաքականություն, քանզի միայն այդ պարագայում դա կարող է արդյունավետորեն կիրառվել որպես հակապարբերաշրջանային կարգավորման գործիքակազմի լիարժեք տարր:

---

[11] Տե՛ս **Alesina A.** and **Tabellini G.**, Why is Fiscal Policy Often Procyclical?, NBER Working Paper No. 11600, September, 2005:

Օգտագործված գրականություն

1. Ամփոփ հաշվետվություն ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին, Եր., 2009: http://www.gov.am/files/library/74.pdf
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Եր., 2010:
3. Alesina A. and Tabellini G., Why is Fiscal Policy Often Procyclical?, NBER Working Paper No. 11600, September, 2005.
4. Barro R. J., Are Government Bonds Net Wealth, Journal of Political Economy 81, 1974.
5. Bornhorst F. and Dobrescu G., When and How to Adjust Beyond the Business Cycle? A Guide to Structural Fiscal Balances, Fiscal Affairs Department of IMF, Washington, 2011.
6. Égert, B., Fiscal Policy Reaction to the Cycle in the OECD: Pro- or Counter-cyclical?, OECD Economics Department Working Papers, No. 763, 2010.
7. Jordi G. and Perotti R., Fiscal Policy and Monetary Integration in Europe, Economic Policy, Vol. 37 (October), 2003.
8. Mourre G., Astarita C.and Princen S., Adjusting the budget balance for the business cycle: the EU methodology, European Commission Directorate-General for Economic and Financial Affairs, European Union, 2014.
9. Girouard N. and Christophe A., Measuring Cyclically-adjusted Budget Balances for OECD Countries, OECD Economics Department Working Papers, No. 434, OECD Publishing, 2005.
10. Robert W.R. Price, Thai-Thanh Dang and Jarmila Botev, Adjusting fiscal balances for the business cycle: new tax and expenditure elasticity estimates for OECD countries economics department, WORKING PAPERS No. 1275 10-Dec-2015.
11. Röhn, O., New Evidence on the Private Saving Offset and Ricardian Equivalence, OECD Economics Department Working Papers, No. 762, 2010.

ПРАКСИЯ НАЗАРЕТЯН
Аспирант кафедры
экономической теории АГЭУ

Особенности фискального инструментария антициклического регулирования.– Фискальная политика является одним из рычагов государственного регулирования экономики. В разные периоды, в зависимости от мировой и внутренней экономической ситуации, правительства разных стран пытаются решить проблемы, с которыми они сталкиваются, применяя инструменты дискреционной и недискреционной фискальной политики. Несмотря на то, что последние два десятилетия в процессе антицикличного регулирования предпочтение отдается денежно-кредитной политике, мировой финансово-экономический кризис 2007–2009 годов принудил мировое экономическое сообщество пересмотреть горизонты применения фискальной политики.

Ключевые слова: *антициклическое регулирование, фискальная политика, финансовый кризис 2007–2009 гг., госбюджет, циклический и структурный баланс, фильтр Ходрика-Прескотта, потенциальный ВВП.*
JEL: E63, G01, G18, O23

PRAKSYA NAZARETYAN
Post-graduate at the Chair of
Economic Theory at ASUE

Peculiarities of Fiscal Toolkit for Counter-Cyclical Regulation.– Fiscal policy is one of the levers of state regulation of the economy. Depending on the global and domestic economic situation governments at different times in various countries have tried to solve economic issues applying discretionary and non-discretionary fiscal policies. Although over the past two decades in the issue of countercyclical regulation preference has been given to monetary policy, the global financial crisis of 2007-2009 forced the world economic community to review the horizons of applying fiscal policy.

Key words: *countercyclical regulation, fiscal policy, financial crisis of 2007-2009, state budget, cyclical and structural balance, Hodrick-Prescott filter, potential GDP.*
JEL: E63, G01, G18, O23